ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9/2015
Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գնման

ք. Երևան << 29 >> հունվարի 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ.Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << Մերձմոսկովյան >> բաց բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2014թ. հուլիսի 1-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Համաձայնագրի N 3 հավելվածով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2015 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 102 843 480 ՀՀ դրամ /հարյուր երկու միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր ութսուն ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	<<Մերձմոսկովյան>>ԲԲԸ
Ք.Երևան, Նալբանդյան28	ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն, <<Ինեկոբանկ>>
Կենտրոնական [illegible]	ՓԲԸ, <<Գյումրի [illegible]
Հ/Հ 90001101213[illegible] [illegible]02565518	Հ/Հ 20501- 220153[illegible] [illegible]0580[illegible]
Ստորագրություն՝	Ստորագրություն՝

Հավելված 1
<< 29 >> հունվարի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9/2015 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2015թ.				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում	**20,541,504,0**	**34,724,970,0**	**30,866,640,0**	**16,710,366,0**	**102,843,480,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք.Երևան, Նալբանդյան28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136, ՀՎՀՀ 02565518

Ստորագրություն

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Մերձմոսկովյան>>ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն, <<Ինեկոբանկ>>
ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501- 22011531001, ՀՎՀՀ 05800698

Ստորագրություն

Հավելված 2
<< 29 >>հունվարի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9/2015 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Ֆինանսավորումը ՀՀ 2015թ. պետական բյուջեից												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	**ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում**	**14,379,053,0**	**14,379,053,0**	**14,379,053,0**	**43,112,735,0**	**43,112,735,0**	**43,112,735,0**	**74,873,122,0**	**74,873,122,0**	**74,873,122,0**	**102,843,480,0**	**102,843,480,0**	**102,843,480,0**	**102,843,480,0**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք.Երևան, Նալբանդյան28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 90001101[illegible]36, ՀՎՀՀ 02586518

Ստորագրություն

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Մերձմոսկովյան>> ԳԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջան, գ.[illegible], <<Դեբեդ գետակ>>
ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501- 220[illegible]001 ՀՎՀՀ 03800698

Ստորագրություն

Հավելված 3
<< 29 >> հունվարի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9/2015 համաձայնագրի

Ցանկ

Ախուրյանի տարածաշրջան

2015 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118,9 և կմ130,1-կմ143,4	Միջպետական II-IV	24.00		Լավ	24.00	398.400	9561.600
Մ7, Մ3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2-կմ42.8 և կմ47,1-կմ52,7	Միջպետական II-IV	21.20		Լավ	21.20	398.400	8446.080
Հ75, Մ9-Իսակակյան-Գյումրի-Մ7 կմ 60,2-կմ73,2	Հանրապետական II-IV	13.00		Միջին	13.00	336.000	4368.000
Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 կմ 1,1-կմ14,2	Հանրապետական II-IV	13.10		Բավարար	13.10	252.000	3301.200
Ընդամենը		71.30			71.30		25676.880
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118,9 և կմ130,1-կմ143,4	Միջպետական II-IV	24.00	Բավարար ՄԲ(II)	Միջին	24.00	1266.000	30384.000
Մ7, Մ3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2-կմ42.8 և կմ47,1-կմ52,7	Միջպետական II-IV	21.20	Լավ	Միջին	2.90	576.000	1670.400
			Բավարար ՄԲ(II)	Միջին	14.50	1266.000	18357.000
Հ-75. Մ9-Իսահակյան-Գյումրի-Մ7 կմ60,2-կմ73,2	Հանրապետական II-IV	13.00	Բավարար ՀԲ(II)	Միջին	13.00	1176.000	15288.000
Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 կմ1.1-կմ14.2	Հանրապետական II-IV	13.10	Լավ	Միջին	1.6	552	883.200
			Բավարար ՀԲ(II)	Միջին	9.00	1176.000	10584.000
Ընդամենը		71.30			65.00		77166.600
Ընդամենը Ախուրյանի տարածաշրջանով							102843.480

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
[illegible]6, ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կապալառու
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն,
<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
[illegible]22011531001, ՀՎՀՀ 05800698

տնօրեն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ **N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14 /9/2015**

ք. Երևան <<29>> հունվարի 2015 թ.

<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ <<Պատվիրատու>>) կողմից կազմակերպված՝ <<Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գնման>> ձեռքբերման **N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14 /9/2015** ծածկագրով Շրջանակային համաձայնագիր ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից կազմակերպված <<Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գնման>> ձեռքբերման **N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9/2015** ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Շրջանակային համաձայնագիր ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 10 284 348 (տասը միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամի չափով:

1.1.2 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ինեկոբանկ>> ՓԲԸ բանկի <<Գյումրի>> մասնաճյուղից կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով **<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն** հանձնարարում է <<Ինեկոբանկ>> ՓԲԸ բանկի <<Գյումրի>> մասնաճյուղին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<< Մերձմոսկովյան >> ԲԲԸ,

ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն

Կապալառուի բանկը՝ << Ինեկոբանկ>> ՓԲԸ,
Հ/Հ 20501-22011531001, ՀՎՀՀ 05800698

Տնօրեն՝ Ա. Ադամյան

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ ------

(ստորագրություն)

Կ.Տ

27/2

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9»

ք. Երևան «01» հուլիսի 2014թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ադամյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է մինչև՝ 01.06.2019թ.-ը, սակայն 2014 թվականի համար աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է մինչև 20.12.2014թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից.

2.1.2 Եթե կատարվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց կատարման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Կապալառուից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կապալառուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.4.1 Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կապալառուն Աշխատանքի (Աշխատանքի առանձին փուլի) կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կապալառուի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով 2014 թվականի ընթացքում Կապալառուի կողմից կատարվելիք Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 55 797 304 (հիսունհինգ միլիոն յոթ հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրով 01.01.2015թ.-01.06.2019թ. համար նախատեսված աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (այսուհետև՝ Համաձայնագիր) (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար), իսկ նշված Համաձայնագրով կսահմանվի կատարման ենթակա Աշխատանքների գինը:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Միավորի (ճանապարհի մեկ կիլոմետրի՝ տարվա կտրվածքով) գնի հաշվարկը բերված է սույն Պայմանագրի N 2 հավելվածում:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: 2014 թվականին դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, իսկ 01.01.2015թ.-01.06.2019թ. համար դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Համաձայնագրի կնքումը

5.1 Սույն պայմանագրի հիման վրա գնման պահանջ առաջանալու դեպքում Պատվիրատուն ծանուցում է այդ մասին Կապալառուին՝ կցելով Համաձայնագրի և դրա հավելվածների նախագծերի երկու օրինակ:

5.2 Համաձայնագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, Կապալառուն պարտավոր է ներկայացնել Համաձայնագրի ապահովում: Կապալառուի հետ Համաձայնագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է Համաձայնագրի ապահովում: Համաձայնագրի կատարման ապահովման չափ է սահմանվում կնքվելիք Համաձայնագրի գնի տասը տոկոսը: Համաձայնագրի և (կամ) կանխավճարի ապահովումը պետք է ուժի մեջ մնա և վերադարձվի այն ներկայացնողին Համաձայնագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

5.3 Համաձայնագրի կատարման ապահովումը Պատվիրատուին ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն ստորագրում, կնքում և Պատվիրատուին է վերադարձնում 5.1 կետում նշված փաստաթղթերը:

5.4 Պատվիրատուն ստորագրում, կնքում է Կապալառուի կողմից ստորագրված և կնքված Համաձայնագիրը, հավելվածները և դրանց մեկ օրինակը վերադարձնում է Կապալառուին:

5.5 Համաձայնագրով նախատեսված Աշխատանքների կատարումը սկսվում է Համաձայնագրով սահմանված ժամկետում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների կատարման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.8 Կապալառուն պայմանագրի գործողության ընթացքում պատասխանատվություն է կրում Աշխատանքների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասների համար:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցություն /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն՝ 2014թ. մասով ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, իսկ 01.01.2015թ.-01.06.2019թ. մասով ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Այն դեպքում երբ աշխատանքների կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ապա պայմանագիրը լուծվում է:

8.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

8.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 10 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ք. Երևան Նալբանդյան 28 ՖՆ Գործառնական վարչություն հ/հ 900011012136 ՀՎՀՀ 02565518	«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն «Ինեկեբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ հ/հ 20501-22011531001 ՀՎՀՀ 05800698
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
«01» հուլիսի 2014թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի»

մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
  - Արհեստական կառուցվածքներ
  - Կահավորանք տարրեր (առանց ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ նշագծման և մետաղական պաշտպանիչների)
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների երկարությունները ըստ նշանակության 2014թ. համար՝ համաձայն N 1.1 հավելվածի:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2014թ. համար՝ համաձայն N 1.2 հավելվածի:

II. Ձեռքբերման պայմաններ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի, 2014 թվականի համար աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է մինչև 20.12.2014թ.:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2014 թվականի ընթացիկ ամառային պահպանման աշխատանքների արժեքը 1կմ-ի համար հաշվարկվելու է ստորև ներկայացված բանաձևով՝

$$Ա_{2014} = Ա_{տ} / 7,5 \times 5,5$$

որտեղ՝

$Ա_{2014}$-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2014 թվականի ընթացիկ ամառային պահպանման աշխատանքների արժեքն է 1կմ-ի համար,

$Ա_{մ}$-ն Մասնակցի առաջարկված ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման 1կմ արժեքն է տարվա կտրվածքով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2014 թվականի ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների արժեքը 1կմ-ի համար հաշվարկվելու է ստորև ներկայացված բանաձևով՝

$$Ձ_{2014} = Ձ_{մ} \times 0,2$$

որտեղ՝

$Ձ_{2014}$-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2014 թվականի ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների արժեքն է 1կմ-ի համար,

$Ձ_{մ}$-ն Մասնակցի առաջարկված ընթացիկ ձմեռային պահպանման 1կմ արժեքն է տարվա կտրվածքով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ք. Երևան Նալբանդյան 28 ՖՆ Գործառնական վարչություն հ/հ 900011012136 ՀՎՀՀ 02565518	«ՄԵՐՁՄՈՄԿՈՎՑԱՆ» ԲԲԸ ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն «Ինեկեբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ հ/հ 20501-22011531001 ՀՎՀՀ 05800698
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.1

Տեխնիկական բնութագրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների երկարությունները ըստ նշանակության 2014թ. համար

/կմ/

N	Անվանումը	Ավտոճանապարհները ըստ նշանակության			Ընդամենը
		Միջպետական I տեխնիկական կարգ	Միջպետական II-IV տեխնիկական կարգ	Հանրապետական II-IV տեխնիկական կարգ	
1	Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջան		46,8	26,1	72,9

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան Նալբանդյան 28
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565511

Ստորագրություն
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
<<Ինեկեբանկ>> ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501-22011531001
ՀՎՀՀ 05800698

Ստորագրություն

Հավելված N 1.2

Տեխնիկական բնութագրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2014թ. համար

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի/	Ընդամենը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118,9 և կմ130,1-կմ143,4	Միջպետական II-IV	24,00		Լավ	24,00	332 000	7 968 000
Մ7, Մ3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2-կմ42.8 և կմ47,1-կմ54,3	Միջպետական II-IV	22,80		Լավ	22,80	332 000	7 569 600
Հ75, Մ9-Իսակակյան-Գյումրի-Մ7 կմ 60,2-կմ73,2	Հանրապետական II-IV	13,00		Միջին	13,00	280 000	3 640 000
Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 կմ 1,1-կմ14,2	Հանրապետական II-IV	13,10		Բավարար	13,10	210 000	2 751 000
Ընդամենը		72,90			72,90		21 928 600
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՌՈՒՆ							
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118,9 և կմ130,1-կմ143,4	Միջպետական II-IV	24,00	Բավարար ՄԲ(II)	Միջին	24,00	1 055 000	25 320 000
Մ7, Մ3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2-կմ42.8 և կմ47,1-կմ54,3	Միջպետական II-IV	22,80	Լավ ՄԼ(I)	Միջին	2,00	480 000	960 000
			Բավարար ՄԲ(II)	Միջին	14,50	1 055 000	15 297 500
Հ-75. Մ9-Իսահակյան-Գյումրի-Մ7 կմ60,2-կմ73,2	Հանրապետական II-IV	13,00	Լավ ՀԼ(I)	Միջին	5,00	460 000	2 300 000
			Բավարար ՀԲ(II)	Միջին	8,00	980 000	7 840 000
Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 կմ1.1-կմ14.2	Հանրապետական II-IV	13,10	Լավ ՀԼ(I)	Միջին	9,00	460 000	4 140 000
			Բավարար ՀԲ(II)	Միջին	1,60	980 000	1 568 000
Ընդամենը		72,90			64,10		57 425 500
Ընդամենը Ախուրյանի տարածաշրջանով							79 354 100

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան Նալբանդյան 28
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 90001101213
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
<<Ինեկեբանկ>> ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501-22011531001
ՀՎՀՀ 05800698

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«01» հուլիսի 2014թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9» ծածկագրով պայմանագրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների տարվա կտրվածքով ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ինքնարժեքների հաշվարկների ձևեր

Ձև N6. Աղյուսակ 6

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	545 800		
Լավ ՄԼ (I)	821 100	710 000	
Բավարար ՄԲ (II)		1 679 500	1 972 800

Ձև N6. Աղյուսակ 6.1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	495 800		
Լավ ՄԼ (I)	542 600	480 000	
Բավարար ՄԲ (II)		1 055 000	1 125 000

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային	282 400		

ՄԵ			
Լավ ՄԼ (I)	568 700	460 000	
Բավարար ՄԲ (II)		980 000	1 029 500

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	525 000	515 000	489 800
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	332 000	233 900	287 500
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	187 800	280 000	210 000

Հավելված N 6 Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհահատվածի երկարությունը	Սպասարկման պահանջվող մակարդակը	Սպասարկվող ա/ճ հատվածների ընդհանուր երկարությունը	Ձմեռային պահպանման ընդհանուր արժեքը՝ տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ108,2-կմ118,9 և կմ130,1-կմ143,4	24,0	Լավ	24,0	7 968 000
Մ7, Մ3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ27,2-կմ42.8 և կմ47,1-կմ54,3	22,8	Լավ	22,8	7 569 600
Հ75, Մ9-Իսակակյան-Գյումրի-Մ7 կմ 60,2-կմ73,2	13,0	Միջին	13,0	3 640 000

Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 կմ 1,1-կմ14,2	13,1	Բավարար	13,1	2 751 000
Ընդամենը				21 928 600

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան Նալբանդյան 28
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900017012136
ՀՎՀՀ 02565518

(կնիք, ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
<<Ինեկեբանկ>> ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501-22011531001
ՀՎՀՀ 05800698

(ստորագրություն)

Հավելված 3
«01» հուլիսի 2014թ. կնքված
N «ԳԱԿ-ԵՇԱԵՁԲ-11/1-ՏԿՆ-14/9» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ*

/ՀՀ դրամ/

N	Աշխատանքի անվանումը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2014թ. պետական բյուջեի հաշվին նախատեսված միջոցներից, ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2014թ. համար ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	-	-	-	-	-	-	36 658 828	36 658 828	36 658 828	55 797 304	55 797 304	55 797 304	55 797 304

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են անդրական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան Նալբանդյան 28
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՀՄՈՍԿՈՎՑԱՆ» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, <<Գյումրի>> մասնաճյուղ
Հ/Հ 20501-22011531001
ՀՎՀՀ 05800698

Հավելված 4
«01» հուլիսի 2014թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9» ծածկագրով պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
հՀՀ_____	հՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20___թ.
Պայմանագրի անվանումը՝ «_____»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» _____ 20___թ
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն, ի դեմս _____, և Կապալառուն, ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «____» _____ 20___թ.-ից «____» _____ 20____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
_____ (Ազգանուն, Անուն)	_____ (Ազգանուն, Անուն)
կՏ	կՏ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N << ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9>>

ք. Երևան «24» հունիսի 2014թ.

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Աղամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ /այսուհետև Ընկերություն/, սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ՄԻԳ>> պետական հիմնարկ (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների>> ձեռքբերման <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների>> ձեռքբերման ՈԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9 գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 9 522 492 (ինը միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր իննսուներկու) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն հայտարարության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն հանձնարարում է «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9 պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն հայտարարության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1-ՏԿՆ-14/9 պայմանագրի ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրվանից հաշված 28 օրացուցային օր:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները.

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
Շիրակի մարզ Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 20501-22011531001
ՀՎՀՀ 05800698

տնօրեն Ա.Աղամյան

(ստորագրություն)

Կ.Տ